

«մանուկ տիօք եւ տգէտ մտօք, խաւարեալ խորհրդով եւ անիմաստ հանճարով, անուղղայ վարուք, վատ եւ ապիրատ յամենայն իրս եւ ի գործս, լիրբ, անղգամ եւ յանդուզն»⁶ :

Թիկնածուին այս յոռի յատկութիւններուն ծանօթ ժողովուրդը, փութաց նախադուշացնել կաթողիկոսը .

«Չըլինի թէ զնա օրհնես մեղի,
Թէ չէ նա շատ աղմուկ լինի» :

Հակառակ այս նախազուշացուցիչ ազդարարութեան՝ Մելքիսեղեկ զնաց քաղաքի պարխախներէն դուրս գտնուող Հաճկատար վանքը, ձեռնադրելու եպիսկոպոս վանքին միարան Նիկոլ արեղան : Ձեռնադրութեան արարողութիւնը սկսաւ գիշերաժամին, «ի ներկայութեան բազմաթիւ կղերականներու եւ աշխարհականներու»⁷ :

Լուրը հասաւ քաղաք. աղմկեցաւ ժողովուրդը . բազմութիւն մը գիշերախառն դիմեց վանք, խափանելու ձեռնադրութիւնը : Բայց Կաթողիկոսը խաղաղեց ժողովրդեան բարկութիւնը՝ հաւաստիացնելով թէ ինքը մտադիր է նորընծայ եպիսկոպոսն իրեն հետ առնել տանիլ : Այսպէս կրցաւ յաւարտ հանել ձեռնադրութիւնը : Արդեամբքալ անմիջապէս նորընծային հետ մեկնեցաւ Լվովէն Յաղովցայի ճանապարհով հասնելու Կամենից : Երբ հասան Յաղովցա, յայտնեց կաթողիկոսը

⁶ Ձեռ. էջմ. 1004 :

⁷ Relatio brevis.